



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի  
Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

<< 29 >> << մարտի >> 2018թ.  
ք. Եղեգնաձոր

N 39

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԶԻՎԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ՝**

1. 2018 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Զիվայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացնել 2016-2017 թ.թ.-ների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ << Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանի, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Նորայր Կարապետյանի, Խիկար Խաչատրյանի /ապրիլի 3-ից/ և Հասմիկ Ավետիսյանի կողմից:

2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:

3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 5 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2018 թվականի մարտի 30-ին, ավարտել 2018 թվականի ապրիլի 6-ին:



Հ. ՍԱՐԳՍՅԱՆ